Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

91.71
7-97

Հ. 188
Ը. Ա.

Հրատարակութիւն ՄՈՒՐՃ ամսագրի

Ա. ՊՈՒՇԿԻՆ

ՑԱՒԵՐԺԱՀԱՐՍԸ

(ՊՕԷՄԱ)

Թարգմանեց

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿՐԱՍԻԼՆԻԿՅԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Վրաց Հր. Ընկ. || Типогр. Груз. Изд. Т—ва
1902

891.71
Պ-90

Հրատարակութիւն ՄՈՒՐՃ ամսագրի

Ա. ՊՈՒՇԿԻՆ

ՅԱՒԵՐԺԱՀԱՐՍԸ

(ՊՈԷՄԱ)

Թարգմանեց

ԿՈՆՍՏԱՆԴԻՆ ԿՐԱՍԻԼՆԻԿԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Վրաց Հր. Ընկ. || Типогр. Груз. Изд. Т—ва
1902

23 JUL 2013

13/39

Дозволено цензурою. Тифлисъ, 11 января 1902 года.

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Դնէպրի ափը. Ջրագաց։

ՋԱՂԱՑՊԱՆՆ ՈՒ ՆՐԱ ԱՂՋԻԿԸ

Ջաղացպան։

Օհ, բանն էլ այդ է, որ դուք բոլորդ
Ցիմար էք, ցիմար, ջահել աղջկերք։
Թէ ձեզ պատահեց մի նախանձելի
Ոչ հասարակ մարդ, դուք պիտի նրան
Էլ ամենևին ձեռքից չը թողնէք։
Իսկ ինչով.—ազնիւ, խելացի վարքով
Հրապուրել նրան, մերթ փաղաքշանքով,
Եւ մերթ խստութեամբ. մի-մի անգամ էլ
Հարևանցօրէն խօսք պիտի դցել
Պակի մասին, իսկ ամենից չատ
Անարատ պահել կոյսի պատիւը—
Այդ անդին գանձը։ Դա, ինչպէս խօսքը,
Եթէ դուրս թռաւ, էլ ձեռք չի ընկնի։
Բայց ամուսնութեան թէ էլ յոյս չը կայ,

Հо կարելի է մի բան վաստակել
Իրան, կամ գոնէ ծնողի համար։
Պէտք է մտածել՝ «նա ինձ յաւիտեան
Հо չի սիրելու և փայփայելու»։
Է՛հ, չէ, դուք իսկի ընդունակ էլ չէք
Մի լաւ բան անել։ Մինթէ յարմար է.
Իսկոյն գժւում էք և երջանիկ էք՝
Չրի կատարել նրա հաճոյքը։
Պատրաստ էք ողջ օր ձեր սիրելի
Վզից կախ ընկնել, իսկ այդ սիրելին,
Տեսար—չքացաւ, հետքն էլ չերևաց
Եւ դուք էլ ոչինչ օգուտ չունեցաք...
Օ՜հ, դուք բոլորդ էլ այդպէս յիմար էք։
Քեզ հարիւր անգամ մինթէ չեմ ասել.
Է՜յ, աղջիկ, նայիր, այնքան էլ տխմար
Մի լինիր, բախտը քո ձեռքից չը տաս.
Մի թող իշխանին, և յիմարաբար
Քեզ չը կորցնես։ Եւ ինչ դուրս եկաւ.
Դէհ, այժմ նստիր ու միշտ դու ողբա,
Ինչ որ յետ բերել չես կարող արդէն։

Աղջիկ։

Ինչու՞ ես կարծում, որ նա ինձ թողեց։

Զաղացպան։

Ինչպէս թէ ինչու՞. նա սովորաբար
Շաբթուայ ընթացքում քանի անգամ էր
Զաղացը գալիս։ Հը՞... ամենայն օր,
Բայց երբեմն էլ և երկու անգամ.
Ցեռոյ ըսկսեց աւելի քիչ գալ,
Եւ ահա արդէն ինն երորդ օրն է՝
Նրան չենք տեսնում. սրան ինչ կ'ասես։

Աղջիկ։

Նա զբաղուած է. քիչ հոգսեր ունի։
Զաղացպան հо չէ. ջուրը չէ գործում
Նրա փոխարէն։ Նա միշտ ասում է՝
Որ նրա գործը ամենից ծանր է։

Զաղացպան։

Այո՛, ինչպէս չէ, հաւատա՛ նրան։
Ե՞րբ են աշխատում այդ իշխանները։
Եւ դա ինչ գործ է։ Աղուէս, նապաստակ
Որսալ, քէֆ անել, քերթել դրացուն,
Իսկ յիմարներիդ այդպէս համոզել։
Խեղճուկ. նա ինքն է աշխատում, բանում,
Իսկ իմ տեղ՝ ջուրը... Բայց օր ու գիշեր
Ես հանգիստ չունեմ—այստեղ կարկատիր,

Այնտեղ կարկատիր, մի տեղ փտած է,
Մի տեղ ջուր է գցում. թէ կարողանաս
Նորոգման համար խնդրել իշխանից
Գէթ մի քիչ դրամ, շատ լաւ կը մնայ։

Աղջիկ։

Ախ։

Ջաղացպան։

Ի՞նչ է։

Աղջիկ։

Նրա ձիու քայլերի
Ձայնն եմ լսում... Նա է, նա...

Ջաղացպան։

Տես, հա,
Աղջիկս, յիշիր իմ խորհուրդները...

Աղջիկ։

Գալիս է, գալիս։ (Մտնում է իշխանը. ձիապանը տանում է ձին։)

Իշխան։

Աղջիկն, սիրելիս,
Աղջիկն, ջաղացպան։

Ջաղացպան։

Ողորմած իշխան,
Բարով էք եկել. վաղուց է, վաղուց,
Պայծառ աչքերիդ կարօտում էինք։
Գնամ քեզ համար մի բան պատրաստեմ
Հիւրասիրելու։ (Գնում է)։

Աղջիկ։

Ա՛խ, վերջապէս դու
Ինձ միտդ բերիր։ Մինթէ ամօթ չէ,
Որ այսքան երկար սպասել տալով
Դու անդթաբար ստիպում ես ինձ
Զուր տեղը տանջուել։ Ի՞նչ մտքեր ասես
Գլուխս չեն եկել. ինչ ահ ու դողով
Զեմ պաշարուել ես։ Մերթ ինձ թւում էր,
Թէ ձին քեզ գցեց անդունդ կամ ճահիճ,
Մերթ՝ թէ թանձրախիտ, մութը անտառում
Արջը սպանեց, թէ դու հիւանդ ես,
Թէ ինձ չես սիրում... Բայց, փառք Աստծու,
Դու ողջ առողջ ես և առաջուայ պէս
Դարձեալ սիրում ես, այնպէս չէ՞։

Իշխան։

Այո,

Իմ անդին հրեշտակ, առաջուայ նման.
Ո՛չ, առաջուանից դեռ էլ աւելի։

Աղջիկ։

Բայց դու տխուր ես, ինչ է պատահել։

Իշխան։

Ես տխուր եմ. ոչ, ես միշտ ուրախ եմ,
Երբ քեզ տեսնում եմ։

Աղջիկ։

Ո՛չ, երբ ուրախ ես,
Հեռուից վազում ես դէպի ինձ ու կանչում.
Ո՞ւր է աղաւնեակս, ինչ է անում նա։
Ցեռոյ համբուրում ու հարցնում ես,—
Արդեօք ուրախ եմ, որ քեզ տեսնում եմ,
Արդեօք այդպէս վաղ սպասում էի...
Իսկ այսօր—դու ինձ անխօս լսում ես,
Ինձ ոչ գրկում ես և ոչ համբուրում,
Անշուշտ մի բանից դու վրդովուած ես.
Բայց ինչից, ասա. գուցէ ինձ վրայ
Դու բարկացած ես։

Իշխան։

Ես. չեմ կամենում
Զուր տեղը կեղծել, դու ճիշտ ես ասում.

Ծանր թախիծ եմ կրում սրտիս մէջ
Եւ դու չես կարող փարատել նրան.
Ո՛չ քո սիրատենչ փաղաքշանքներով,
Ո՛չ մխիթարել, ոչ էլ բաժանել։

Աղջիկ։

Բայց ցաւ եմ զգում, որ քո վշտերով
Ես չեմ վշտանում քեզ հետ միասին։
Ասա գաղտնիքդ. եթէ թոյլ կը տաս,
Ես լաց կը լինեմ, թոյլ չես տայ—կաթիլ
Մի արտասուք էլ չի հոսի աչքիցս։

Իշխան։

Ի՞նչ ուշացնեմ, որքան չուտ ասեմ,
Այնքան էլ լաւ է։ Իմ անդին ընկեր,
Դու գիտես, որ այս ունայն աշխարհում
Չը կայ մնայուն մի երջանկութիւն—
Ո՛չ յայտնի տոհմը, ոչ գեղ և ոչ դանձ,
Ո՛չ մի զօրութիւն չեն կարող բնաւ
Մեզ ազատ պահել աղէտից։ Եւ մենք
Երջանիկ էինք, այնպէս չէ, հոգիս։
Գոնէ քեզանով, քո սիրովը ես
Երջանիկ էի, և այսուհետև
Ինչ էլ պատահի, ուր էլ որ լինեմ,
Միշտ քեզ կը յիշեմ, ընկեր սիրելի։

Այն, ինչ որ այժմ ես կորցնում եմ,
Չի փոխարինի աշխարհում ոչինչ։

Աղջիկ։

Քո խօսքերը դեռ ես չեմ հասկանում,
Բայց արդէն սիրտս դողում է ահից.
Ճակատագիրը մեզ սպառնում է
Եւ մեզ պատրաստում մի վիշտ ոնծանօթ—
Գուցէ՝ անջատումն...

Իշխան։

Դու գուշակեցիր.
Անջատումն է մեզ ճակատագիրը
Նախասահմանել։

Աղջիկ։

Ո՞վ մեզ կ'անջատէ.
Մինթէ ազատ չեմ քեզ հետևելու,
Ուր որ էլ գնաս։ Ես տղի շորեր
Կը հագնեմ. ճամբին, թէ կռուի պահուն
Քեզ հաւատարիմ կը ծառայեմ ես.
Կռուից չեմ վախում, դէթ քեզ հետ լինեմ։
Ո՛չ, ո՛չ, մի ասիր, ես չեմ հաւատում.
Գուցէ ուզում ես դու խօսք դուրս քաշել,
Կամ ինձ հետ դատարկ կատակ ես անում...

Իշխան։

Ո՛չ, այսօր միտքս կատակ չէ գալիս,
Խօսք էլ դուրս քաշել ինձ հարկաւոր չէ։
Ես չեմ պատրաստւում կոիւ գնալու,
Ո՛չ հեռու ճամբայ։ Ես տանն եմ մնում,
Բայց պէտք է քեզնից բաժանուեմ ընդ միշտ։

Աղջիկ։

Սպասիր, այժմ ես հասկանում եմ.
Դու պսակւում ես։ (Իշխանը լռում է։)
Դու պսակւում ես...

Իշխան։

Ի՜նչ պէտք է արած. դու ինքդ դատիր.
Իշխանները հօ ազատ չեն, ինչպէս
Դուք աղջկերքդ։ Հարսնացու նրանք
Չեն ընտրում այնպէս, ինչպէս որ իրանց
Սիրտը ուզում է, այլ ուրիշ մարդկանց
Հաշուի համաձայն, և ուրիշների
Օգուտի համար... Քո վիշտը Աստուած
Եւ ժամանակը կը մխիթարեն։
Ինձ մի մոռանար. իբրև յիշատակ
Այս գլխի զարդը վեր առ և թող տուր՝

Ինքս հագցնեմ։ Բերել եմ նաև
Մի սիրուն մանեակ—այդ էլ վերցրու։
Հա՛, այս մէկն էլ տուր քո հօրը—Նրան
Ես խոստացել եմ։ (Տալիս է նրան ոսկով լի մի քսակ։)

Մնաս բարի։

Աղջիկ։

Ես...

Սպասիր, մի բան պէտք է ասէի—
Չեմ յիշում թէ ինչ։

Իշխան։

Միտդ բեր։

Աղջիկ։

Քեզ համար
Պատրաստ եմ ես ողջ... Ո՛չ, այդ չէ, սպասիր...
Անկարելի է, որ դու իսկապէս
Ինձ կարողանաս յաւիտեան թողնել...
Բայց բանն այդ չէ... Հա՛, միտս եկաւ.
Այսօր կրծքիս տակ մանուկդ խաղայ։

Իշխան։

Դժբախտ, ինչ արած. դէթ նրա համար
Դու քեզ պահպանիր։ Ես չեմ թողնի քեզ,

Եւ ոչ քո մանկան։ Ժամանակով էլ
Գուցէ ես կը գամ և ձեզ կ'այցելեմ։
Մի տխրիր, թոյլ տուր, որ վերջին անգամ
Քեզ կրծքիս սեղմեմ։ (Դուրս գնալով։)

Ո՜ւհ, վերջացաւ ողջ։

Կարծես սրտիցս մի քար վայր ընկաւ.
Ես փոթորիկի էի սպասում,
Բայց բանն անցաւ բաւական հանդարտ։
(Իշխանը գնում է, իսկ աղջիկը մնում է անշարժ։)

Զաղացպան, մտնում է։

Շնորհ չէք անի արդեօք գալ ջրա...
Հապա ո՞ւր է նա. ասա՛, ո՞ւր գնաց
Մեր իշխանը։ Վա՜հ, ինչ գլխի զարդ է,
Ամբողջ թանկագին քարերով ծածկուած,
Այնպէս փայլում է։ Ինչ ուլունքներ են...
Իսկ արքայական չքեղ ընծայ է։
Ա՛խ, մեր բարերար... Իսկ այս ինչ բան է,
Քսակ, չը լինի թէ փող է... Ի՜նչ է,
Սառած կանգնել ես, չես պատասխանում,
Մի խօսք չես ասում. թէ անսպասելի
Ուրախութիւնից խելքդ թռել է.
Թէ ապուշութիւն եկաւ քեզ վրայ։

Աղջիկ։

Ես չեմ հաւատում, անկարելի է.
Ես նրան այնպէս ջերմ սիրում էի...
Կամ նա գազան է, կամ քարացել է
Նրա սիրտը։

Ջաղացպան։

Ո՞ւմ մասին ես խօսում։

Աղջիկ։

Ասա ինձ, հայրիկ, մի՞թէ իշխանին
Ես կարող էի բարկացնել. մի՞թէ
Մի շաբաթուայ մէջ գեղեցկութիւնս
Զբացաւ, թէ նրան իրաւ հմայեցին։

Ջաղանպան։

Ի՞նչ պատահեց քեզ։

Աղջիկ։

Հայրիկ, նա գնաց։
Տես, ձին քշում է, իսկ ես անխելքս
Նրան բաց թողի։ Նրա փէչերից
Ես չը բռնեցի եւ ձիու սանձից
Կախ չընկայ։ Թող նա բարկութիւնից
Ձեռքերս կտրէր մինչև արմունկը,
Թող հէնց այստեղ էլ ջարդէր իր ձիու
Ոտքերի տակ։

Ջաղացպան։

Ի՞նչ պատահեց սրան։

Աղջիկ։

Արդեօք դու դիտէս, որ իշխանները
Մեզ պէս ազատ չեն. կին են վերցնում
Ո՛չ իրանց սրտի, կամքի համաձայն...
Իսկ նրանք հօ միշտ ազատ կարող են
Խաբել, լաց լինել, երդուել և ասել.
«Ես քեզ կը տանեմ իմ ապարանքը,
Իմ ենջարանը. քեզ կը հագցնեմ
Դիպակ և թաւիշ»։—Նրանք ազատ են
Խեղճ աղջկերանց սովորեցընել
Կէս գիշերուանից տեղից վեր կենալ
Իրանց չվոցից և մինչ արշալոյս
Զբաղացի մօտ ժամանակ անցնել։
Նրանց հաճոյ է, որ իշխանական
Սիրտը միշտ բերկրի և զուարճանայ
Մեր անբախտութեամբ։ Ցեռոյ, մնաս բարով.
Գնա, հոգեակս, ուր որ կամենաս,
Եւ սիրիր, ում որ քո սիրտը կ'ուզէ։

Ջաղացպան։

Ա՜, ահա թէ ինչ...

Աղջիկ։

Բայց ո՞վ է նրա
Հարսնացուն, որին ինձ փոխարինեց։
Օ՜, ես կ'իմանամ, կը գտնեմ նրան.
Ես կ'ասեմ նրան՝ այդ չարագործին.
Հեռացիր մեզնից, դու հո տեսնում ես՝
Երկու էգ գայլեր չեն կենում երբէք
Մի որջում...

Զաղացպան։

Ցիմար, եթէ իշխանը
Հարսնացու ընտրի, ո՞վ կը յանդգնի
Արգելել նրան։ Հէնց դրա համար
Քեզ ասում էի...

Աղջիկ։

Եւ նա կարող էր,
Ինչպէս բարի մարդ, ինձ հրաժեշտ տալ,
Եւ ընծայ բերել։ Ի՞նչպէս, և դրամ։
Նա իր արարքը մտածեց գնել
Փողով. նա ուզեց արծաթազօծել
Լեղուս, որպէս զի նրա մասին վատ
Լսուր չը տարածուի և նրա ջահել
Կինը չիմանայ... Հա՛, մոռացայ ես.

Նա ասաց որ այս արծաթը տամ քեզ,
Որովհետև դու շատ բարի էիր,
Եւ քո աղջկան թոյլ էիր տալիս
Նրա հետևից քաշքշուել, որ դու
Քո աղջկանը խիստ չէիր հսկում...
Իմ անկումը քեզ օգուտ կը բերի։ (Տալիս է նրան քսակը։)

Զաղացպան, արտասուքն աչքերին։

Ի՞նչ օրի հասայ. Աստուած իմ գլխիս
Ի՞նչ փորձանք բերաւ։ Մեղք է քեզ համար,
Որ դու քո հօրը այդպէս դառնագին
Ցանդիմանում ես։ Միակ զաւակս ես,
Ամբողջ աշխարհում միակ մխիթար
Իմ ծերութեան մէջ։ Եւ ինչպէս ես քեզ
Երես չը տայի։ Աստուած ինձ պատժեց,
Որ ես հայրական պարտականութիւնս
Թոյլ կատարեցի։

Աղջիկ։

Օ՜հ, ես խեղդւում եմ,
Եւ սառը օձը ճնշում է վիզս...
Ո՛չ թէ մանեակով, այլ մի ժանտ օձով
Նա ինձ փաթաթեց... (Գոկում է իրանից մարգարիտը։)

1002
5793

Ահա հէնց այսպէս
Կը պատռէի քեզ, անիծեալ օձ-կին,
Քեզ, որ միմեանցից մեզ անջատեցիր։

Ջաղացպան։

Դու զառանցում ես. իսկ զառանցում ես։

Աղջիկ, հանում է գլխի զարդը։

Ահա իմ պսակը, անարգ պսակը.
Ահա թէ ինչով մեզ պսակեց նենգ,
Ստոր թշնամին, երբ հրաժարուեցի
Ես այն ամենից, ինչ որ ինձ համար
Աւաղ չատ թանգ էր։ Մեր պսակը լուծուեց.
Հեռացիր ինձնից, պսակ իմ։ (Գցում է Դնէպրի
մէջ իր գլխի զարդը)։
Ամեն ինչ
Վերջացաւ այժմ... (Ընկնում է գետը)։

Ծերուկ, վայր ընկնելով։

Օ՛, վայ ինձ, վայ ինձ։

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Իշխանական ապարան։

ՀԱՐՍԱՆԻՔ Է. ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐԸ ՆՍՏԱԾ ԵՆ ՍԵՂԱՆԻ ՇՈՒՐՋԸ։
ՀԻՒՐԵՐ. ԱՂՋԿԵՐԱՆՑ ԽՄԲԵՐԳ

Խնամի։

Հարսանիքը չատ ուրախ անցկացաւ։
Ողջոյն քեզ, Իշխան, քո երիտասարդ
Իշխանուհու հետ։ Տայ Աստուած, որ դուք
Միմեանց հետ սիրով, համերաշխ ապրէք,
Իսկ մենք էլ ձեզ մօտ յաճախ քէֆ անենք։
Ինչո՞ւ էք լռել, սիրուն աղջկերք.
Ինչո՞ւ էք դուք մունջ, սիպտակ կարապներ.
Թէ բոլոր երգեր երգեցիք արդէն,
Թէ կոկորդներդ երգից ցամաքեց։

Խմբերգ։

Խնամի ջան, խնամի,
Ա՛յ, անչնորհք խնամի.
Հարս տեսնելու գնացինք—
Բանջարանոց մենք մտանք,
Եւ մի տակառ գարեջուր
Ամբողջովին թափեցինք,

Ողջ կաղամբը ջրեցինք,
Ցանկապատին գլուխ տուինք,
Աղօթք արինք մենք դռնին.
Դռնիկ ջան դու, դռնիկ ջան,
Դէհ, շուտ ցոյց տուր մեզ ճամբան,
Հարս տեսնելու մեր ճամբան։
Խնամի ջան, գլխի ընկիր,
Զեռքդ ջէրդ դու դցիր.
Ջէրիդ փողը ղընգալիս
Ի՞նչպէս է մեզ դուր գալիս։

Խնամի։

Զարաճիներ, ինչ երգ էք ընտրել.
Դէհ, շուտ վերցրէք, բայց խնամուն էլ
Մի յանդիմանէք։ (Պարգևատրում է աղջկերանց։)

Մի ձայն։

Քարերի միջով,
Դեղին աւազով հոսում է մի գետ.
Այդ արագահոս գետի ջրերում
Պար են բռնում միշտ երկու հատ ձկնիկ,
Երկու հատ ձկնիկ, երկու տարեխիկ։
Իսկ դու լսել ես, իմ քոյրիկ ձկնիկ,
Այն լուրի մասին, մեր գետի մասին,

Թէ ինչպէս մի օր, մի սիրուն աղջիկ
Խեղդուեց գետի մէջ, թէ նա խեղդուելիս,
Ինչպէս անիծեց իր սիրելիին։

Խնամի։

Ի՛մ սիրունիկներ, ախր այդ ինչ է,
Հարսանիքի էլ կարծես թէ երգ չէ։
Այդ ո՞վ ընտրեց, դէ ասէք, տեսնեմ։

Աղջիկներ։

Ե՛ս չեմ... ես էլ չեմ...

Խնամի։

Հապա ո՞վ երգեց։
(Շշնջիւն և իրարանցում աղջկերանց մէջ։)

Իշխան։

Ես գիտեմ ով էր։ (Վեր է կենում տեղից և կամաց ասում ախոռապետին։)
Ձի՞ որ այստեղ է
Ձաղացպանուհին։ Դուրս գցիր նրան,
Եւ իմացիր տես, ո՞վ համարձակուեց
Նրան ներս թողնել։ (Ախոռապետը մօտենում է աղջկերանց։)

Իշխան, ինքն իրան։

Նա այստեղ գուցէ
Այնքան ձայն, աղմուկ կը բարձրացնի,

Որ ես ամօթից չեմ էլ իմանայ
Թէ սրտեղ թաղնուեմ։

Ախորապես։

Նրան չը գտայ։

Իշխան։

Փնտրիր, ես գիտեմ, որ նա այստեղ է.
Նա էր երգողը։

Հիւր։

Տես թէ ինչ մեղր է.
Մարդու գլուխը ու ոտն է ընկնում,
Ափսոս, որ դառն է. բայց վատ չէր լինի
Քիչ քաղցրացնել...
(Նորապսակները համբուրում են. լսում է մի թոլ ճիչ։)

Իշխան։

Նա է, այդ նրա
Խանդոտ ճիչն է... Ի՞նչ է։

Ախորապես։

Ոչ մի տեղ
Չը գտայ նրան։

Իշխան։

Ցիմար։

Փեսեղբայր։

Բայց արդեօք
Ժամանակը չէ՞, որ իշխանուհուն
Ցանձնենք ամուսնուն և չէմքամիջում
Մենք գայլուկ շաղ տանք նրանց գլխներին։

Խնամի։

Ի հարկէ, ճիշտ որ ժամանակն է.
Հապա մի այստեղ բերէք աքլորը։
(Նորապսակներին ուտացնում են տապակած աքլոր, շաղ են տալիս նրանց գլխին գայլուկ և տանում ննջարան։)

Խնամի։

Տիրուհի, հոգեակս, մի լար, մի վախիր,
Հնազանդ եղիր։ (Նորապսակները գնում են ննջարան. ամենքը ցրում են բացի խնամուց և փեսեղբօրից։)

Փեսեղբայր։

Ո՞ւր է գաւաթը.
Ամբողջ գիշերը պատուհանի տակ
Ես պիտի չրջեմ, և վատ չէր լինի
Գինով տաքանալ։

Խնամի, լցնում է նրա գաւաթը։

Ա՛ռ, մնուշ արա։

Փեսեղբայր։

Ո՛ւհ, չնորհակալ եմ։ Ի՛սկ որ ամեն ինչ
Շատ լաւ անցաւ, չէ՞։ Հարսանիքը հօ՝
Նմանը չունի։

Խնամի։

Այո՛, փառք Աստուծոյ,
Բոլորը լաւ անցաւ, բացի մի բանից։

Փեսեղբայր։

Ի՞նչ բանից։

Խնամի։

Ախր այն երգը իսկի
Բարի նշան չէր, և հարսանիքի
Երգ էլ չէր. Աստուած գիտէ, թէ ինչ էր։

Փեսեղբայր։

Է՛հ, միշտ պէտք է որ այդ աղջկերքը
Մի օյին սարքեն։ Ա՛խր վայել է,
Որ իշխանական պերճ հարսանիքը
Դիտմամբ խանգարեն։

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Դահլիճ։

ԻՇԽԱՆՈՒՀԻ ԵՒ ԴԱՅԵԱԿ

Իշխանուհի։

Սուս, կարծես փողը փչում է. բայց ոչ,
Նա չէ գալիս, չէ։ Ախ, նանի, երբ նա
Դեռ փեսացու էր, իմ կշտից մի քայլ
Չէր հեռանում, և պատահում էր,
Որ աչքը ինձնից չէր հեռացնում։
Հէնց ամուսնացաւ,—ամեն ինչ փոխուեց.
Այժմ նա վաղ է ինձ զարթեցնում,
Եւ հրամայում է, որ ձին չուտ թամքեն,
Մինչև կէս գիշեր Աստուած գիտէ թէ
Նա ուր է գնում։ Վերադառնում է—
Հազիւ հազ քաղցր մի խօսք է ասում,
Հազիւ սիրալիր ձեռքով չփում է
Սիպտակ երեսս։

Դայեակ։

Է՛հ, իշխանուհի,
Տղամարդը ճիշտ որ աքաղաղ է.

Կու-կու-կու... տեսար թեը թափ տուեց
Ու փախաւ դնաց։ Իսկ կինը—ինչպէս
Թխսկան հաւը՝ նստիր քո տեղը
Ու ճուտեր հանիր։ Երբ փնտացու է—
Նա ամենեին տեղը չի նստի,
Չի ուտի-խմի, երկար կը նայի,
Ե. չի կշտանայ։ Հէնց որ պատկուեց—
Հոգսը չատացաւ. պէտք է այցելել
Հարևաններին, կամ որսի գնալ,
Կամ կը պանայ դէպի պատերազմ,
Այստեղ կամ այնտեղ, իսկ տանը նստել
Չի կարողանայ։

Իշխանուհի։

Ի՞նչպէս ես կարծում,
Արդեօք նա չունի գաղտնի սիրուհի։

Դայեակ։

Օ, մեղք մի գործիր, ախր ումի հետ
Նա քեզ կը փոխի. դու ամեն բանով
Ցաղթել ես նրան. խելքով, հրաշալի
Քո գեղեցկութեամբ, սովորոյթներով
Եւ ուշիմութեամբ։ Մտածիր, հոգիս,
Ո՞ւմ մէջ այդքան զանձ նա պիտի գտնի,
Եթէ ոչ քո մէջ։

Իշխանուհի։

Եթէ որ Աստուած
Աղօթքս լսէր, երեխայ տար ինձ,
Ես այն ժամանակ լաւ կ'իմանայի
Ամուսնուս դէպի ինձ դրաւել նորից...
Տես, որսորդներով բակը լցուեցին,
Մարդս տուն եկաւ. բայց ինչու համար
Նա չէ երևում։ (Մտնում է որսորդը։)

Ո՞ւր է իշխանը։

Որսորդ։

Նա մեզ հրամայեց տուն վերադառնալ։

Իշխանուհի։

Բայց ինքն ուր է։

Որսորդ։

Իշխանը մնաց
Մենակ անտառում Դնէպրի ափին։

Իշխանուհի։

Դուք յանդգնեցիք թողնել իշխանին
Անտառում մենակ։ Շատ հաւատարիմ
Ծառաներ էք դուք։ Գնայէք, իսկոյն
Թռէք նրա մօտ, ասացէք, որ ձեզ
Ես եմ ուղարկել։ (Որսորդը գնում է։)

Ա՛խ, Տէր իմ Աստուած,
Անտառում մենակ այս կէս գիշերին,
Ե՛ւ վայրի գազան, և՛ դաժան մարդիկ,
Ե՛ւ մարդագէլներ թափառում են միշտ.
Մինթէ փորձանքը չատ կըսպասել տայ.
Շուտով մոմ վառիր պատկերի առաջ։

Դայեակ։

Իսկոյն կը վառեմ, իսկոյն, ա՛չքիս լոյս։

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Դ ն է պ ր. գ ի շ ե ր։

Ցաւերժահարսեր

Ուրախ խմբով մենք
Խորը յատակից
Գիշերն ելնում ենք,
Տաքանում լուսնից...
Սիրում ենք մենք գիշերներով
Գետի տակից հեռանալ,
Սիրում ենք ազատ գլխով
Գետի երես բարձրանալ,

Միմեանց ձայն տալ, հնչուն օդը
Աղմուկներով մեր լցնել,
Եւ մեր կանաչ թաց մազերը
Օդում թափ տալ, չորացնել։

Մէկը։

Սուս, թռչնիկը թփերի տակ
Թրթռում է խաւարում։

Մի ուրիշը։

Մեր և լուսնի միջև մէկը
Ման է գալիս ափերում։ (Թաղնում է։)

Իշխան։

Դէպի այս տխուր ափերն ակամայ
Ինձ մի անյայտ ոյժ հրապուրում է միշտ...
Օ, ծանօթ վայրեր, վշտալի վայրեր։
Այստեղ ամեն ինչ ես լաւ յիշում եմ.
Ահա ջաղացը... Նա արդէն քանդուել
Ու փուլ է եկել. Նրա անիւների
Ուրախ վշշոցի ձայնը չէ հնչում։
Երկանքը կանգնել, էլ չէ պտտւում.
Երևի պառաւ խեղճ ջաղացպանն էլ
Մեռել է։ Նա իր թշուառ աղջկան
Երկար ողբում էր։ Այստեղ չաւիղ կար.

Նա խափանուել է... Վաղուց է, վաղուց,
Ո՛չ մի մարդ այստեղ էլ ոտ չէ դնում։
Այստեղ պարտէզ կար շուրջը ցանկապատ.
Մի՞թէ նա արդէն անտառ է դարձել։
Ահա և կաղնին այն նուիրական.
Այստեղ ծառի տակ նա ինձ գրկելով
Գլուխը խոնարհեց ու լուց... մի՞թէ
Կարելի բան է։ (Մօտենում է դռանը. տերևները թափում են։)

Այս ի՞նչ եմ տեսնում.
Ծառի տերևներն յանկարծ դեղնեցին
Եւ ոլորուելով ու խշխշալով,
Թափուեցին վրաս. իմ առաջ ահա
Կանգնած է կաղնին մերկ և սև, ինչպէս
Մի անլիծած ծառ։ (Մտնում է ծերուկը ցնցոտիների մէջ և կիսամերկ։)

Ծերուկ։

Բարով քեզ, փեսայ։

Իշխան։

Ո՞վ ես դու, ծերուկ։

Ծերուկ։

Ես այս տեղերի
Ագռաւն եմ։

Իշխան։

Մի՞թէ սա ջաղացպանն է։

Ծերուկ։

Ի՞նչ ջաղացպան. ես իմ ջաղացը
Տախել եմ արդէն սատանաներին,
Իսկ փողը տուել յաւերժահարսին—
Գուշակող աղջկան, որ նա պինդ պահէ։
Փողը թաղուած է Դնէպր գետի
Աւազների տակ. նրան հսկում է
Միաչեայ ձուկը։ —

Իշխան։

Խնդմ, նա գժուել է։
Նրա մազերը այնպէս են ցրուած,
Ինչպէս ամպերը փոթորկից յետոյ։

Ծերուկ։

Այս երեկոյեան դու ինչո՞ւ չեկար.
Մեզ մօտ խնջոյնք կար և մենք քեզ երկար
Սպասում էինք։

Իշխան։

Ո՞վ էր սպասում։

Ծերուկ։

Ով էր սպասում. ի հարկէ, աղջիկս։
Դու գիտես, որ ես բոլորի վրայ
Նայում եմ միայն մատերի միջով
Եւ ազատութիւն տալիս լիովին.
Թէկուզ նա քեզ հետ նստի ողջ գիշեր,
Մինչև ի լոյսը—մի խօսք չեմ ասի։

Իշխան։

Խեղճուկ ջաղացպան։

Ծերուկ։

Ի՞նչ ջաղացպան եմ.
Քեզ հօ ասում են, որ ես ագռաւ եմ,
Ո՛չ թէ ջաղացպան։ Հիանալի դէպք.
Երբոր (յիշում ես) նա իրան գցեց
Գետը, վազեցի նրա ետևից
Եւ հէնց ուզեցի այն ժայռի գլխից
Ինձ ջուրը նետել, և մէկ էլ յանկարծ
Զգացի՝ երկու զօրաւոր թեւեր
Իսկոյն իմ կռան տակերից բուսան
Եւ ինձ օդի մէջ կախուած պահեցին։
Այդ ժամանակից մերթ ես թռչում եմ
Այս ու այն կողմը, մերթ կուտկուտում եմ

Սատկած կովերին, մերթ նստում եմ ես
Գերեզմանի վրայ ու կրկռում եմ։

Իշխան։

Ինչ խղճալին է։ Քեզ ով է նայում։

Ծերուկ։

Այո, նայել ինձ շատ լաւ կը լինէր.
Ես ծերացել եմ, պահանջող դարձել։
Շնորհակալ եմ, ինձ խնամում է
Ցաւերժահարսը։

Իշխան։

Ո՞վ։

Ծերուկ։

Իմ թոռնիկը։

Իշխան։

Հասկանալ սրան անկարելի է։
Ծերուկ, դու այստեղ, այս անտառի մէջ
Քաղցից կը մեռնես, կամ թէ գազանը
Քեզ կ'ուտէ։ Արդեօք չես կամենայ գալ
Իմ ապարանքը և ինձ հետ ապրել։

Ծերուկ։

Քո ապարանքը. ոչ, շնորհակալ եմ,
Ինձ կը հրապուրես և յետոյ, գուցէ,

Խեղդես մանեակով։ Այստեղ ապրում եմ
Ե՛ւ կուշտ, և՛ աղատ։ Քո ապարանքը
Ինձ հարկաւոր չէ։ (Գնում է։)

Իշխան։

Եւ այս բոլորի
Պատճառը ես եմ. սոսկալի բան է
Խելքից զրկուելը։ Մեռնելը լաւ է.
Մեռելի համար աղօթք են անում,
Յարգանք ցոյց տալիս. մահը նրա հետ
Հաւասարում է իւրաքանչիւրիս։
Սակայն այն մարդը որ խելքից զուրկ է
Նման չէ մարդու, իզուր խօսելու
Շնորհք է տուած—նա խօսքին տիրել
Չի կարողանայ։ Նրա մէջ նոյն իսկ
Գազանը իրան եղբօրն է տեսնում.
Մարդիկ ծաղրում են և ամեն մէկը
Նրա նկատմամբ թոյլ կը տայ իրան
Ինչ որ կամենայ։ Նրան Աստուած էլ
Չէ դատում։ Թշուառ, խեղճուկ ծերունի,
Նրա այն տեսքը նորոգեց իմ մէջ
Իմ զղջումների բոլոր տանջանքը։

Ուրուրդ։

Ահա իշխանը. հաղիւ հաղ դատնք։

Իշխան։

Ինչու էք եկել։

Ուրուրդ։

Մեզ իշխանուհին
Ուղարկեց այստեղ. նա վախենում էր
Որ և է փորձանք քեզ չը պատահի։

Իշխան։

Անտանելի է նրա խնամքը.
Թէ ես մանուկ եմ, որ մի քայլ անել
Ինձ չի կարելի առանց դայեակի։ (Գնում է։
Յաւերժահարսերը երևում են ջրի երեսին։)

Յաւերժահարսեր։

Այս հարթ դաշտում նրանց եզքից
Եկէք վազ տանք շտապով.
Եկէք, քոյրեր, նրանց ձիանց
Խրատեցնենք սուլոցով,
Մեր քրքիչով, ծփանքով։
Ուշ է արդէն, կանչեցին
Աքլորները հեռուում,
Ալիքները ցրտեցին,
Ջինջ լուսինը մայր մտաւ,
Մութը պատեց երկնքին։

Մէկը։

Քիչ էլ մնանք. քոյրիկ ջան։

Մի ուրիշը։

Ո՛չ, ոչ, ժամ է. Թագուհին—
Մեր քոյրիկը շատ է խիստ,
Սպասում է անհանդիստ։ (Անհետանում են։)

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Դ ն է պ ր ի յ ա տ ա կ ը։

ՑԱՒԵՐԺԱՀԱՐՍԵՐԻ ԱՊԱՐԱՆՔԸ. ՑԱՒԵՐԺԱՀԱՐՍԵՐԸ ՄԱ-ՆՈՒՄ ԵՆ ԻՐԱՆՑ ԹԱԳՈՒՀՈՒ ՇՈՒՐՋԸ ԲՈԼՈՐԱԾ

Աւագ յաւերժահարս։

Հերիք է մանէք, քոյրիկներ։ Արևը
Մայր մտաւ արդէն—լուսինն է փայլում
Մեզ վրայ ինչպէս մի չողչողուն սիւն։
Հերիք է, հերիք, լոգ տուէք դէպ՝ վեր—
Եւ երկնքի տակ խաղացէք աղատ։
Բայց թէ ոչ ոքի ձեռք չը տաք այսօր։

Չը համարձակուէք դրդռել ափում
Ման եկողներին, չը ծանրայնէք
Ձկնորսի ուռկանն տիղմով ու խոտով,
Եւ չը հրապուրէք մանկան ջրի մէջ՝
Պատմելով նրան անուշ հէքեաթներ
Ձկների մասին։ (Գալիս է փոքրիկ յաւերժահարը։)
Ո՞րտեղ էիր դու։

Աղջիկ։

Դուրս եկայ, ցամաք իմ պապիկիս մօտ։
Նա երեկոյեան խնդրեց ինձ գտնել
Գետի յատակում այն դրամները,
Որ մի ժամանակ նա ջուրն էր գցել։
Ես շատ փնտրեցի. ինչ է դրամը,
Ես չը գիտեմ էլ, բայց նրա համար
Մի բուռն խխունջ տարայ, դրանով
Նա շատ ուրախ էր։

Ցաւերժահարս։

Խելագար ժլատ։
Լսիր, աղջիկս, քեզ վրայ եմ ես
Այսօր յոյս դնում։ Մեզ մօտ, գետափը
Գալու է մի մարդ. զգոյշ եղիր դու,
Եւ դուրս եկ նրան դիմաւորելու։
Մեզ ազգական է—նա քո հայրն է։

Աղջիկ

Նա՝ որ քեզ թողեց և ամուսնացաւ
Ուրիշ կնոջ հետ։

Ցաւերժահարս։

Այո՛, նա։ Սիրիր
Եւ դգուիր նրան և պատմիր ինչ որ
Ինձնից լսել ես թէ քո ծննդեան
Եւ թէ իմ մասին։ Եթէ հարցնէ,
Արդեօք ես նրան դեռ չեմ մոռացել,—
Ասա՛, որ դարձեալ նրան յիշում եմ
Եւ սրտով սիրում ու սպասում եմ
Միշտ նրա գալուն։ Դու հասկացար ինձ։

Աղջիկ։

Օ՜, հասկացայ։

Ցաւերժահարս։

Դէհ, գնա՛։ (Մենակ։) Այն
օրից,

Երբ ինձ գցեցի խելագարի պէս
Այս ջրերի մէջ, ինչպէս ամարդուած
Ցուսահատ աղջիկ, և Դրնէպրի

Խորքում ես դարձայ սառը և հղօր
Մի յաւերժահարս,—ես ամենայն օր
Վրէժխնդրութեան մասին եմ խորհում,
Եւ այսօր, կարծես, ժամը հասել է։

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ

Դնէպրի ափը։

Իշխան։

Դէպի այս տխուր ափերն ակամայ
Ինձ մի անյայտ ոյժ հրապուրում է միշտ...
Այստեղ ամեն ինչ յիշեցնում է
Անցած օրերը և աղատ, կարմիր
Իմ ջահէլութեան՝ թէն վշտալի,
Բայց անուշ վէպը։ Այստեղ երբեմն
Ես աղատ էի և աղատ սիրով
Երջանիկ։ Անխնէլք... Եւ կարողացայ
Ես այդպէս անմիտ հրաժարուել բախտից...
Տխուր, շատ տխուր մտքեր նորոգեց
Երէկ ծերի հետ իմ հանդիպումը։
Խեղճ, տարաբախտ հայր. ինչ սոսկալի էր։

Գուցէ այսօր էլ նրան հանդիպեմ,
Եւ համաձայնի թողնել անտառը
Եւ մեզ մօտ ապրել... (Փոքրիկ յաւերժահարսը
դուրս է գալիս տիրը։)
Ի՞նչ եմ տեսնում ես.
Ո՞րտեղից ես դու, հրաշալի մանուկ։
. . . . . *)

---

*) Պուշկինի այս պոէման չէ վերջացած։

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

Դիմել «Մուրճի» խմբագրութեան։

«Ազգային գրադարան»
NL0333060

13.1